**ԿԱՑՆԱՀԱՐ**, *կանցինով կտրուած, կացնահատ*. 64, 2։

**ԿԱՓԱՑ**, թ. *քաֆիյէ* (قافية) *յանգ ոտանաւորի. յետինք կ'իմանան՝ նոյնայանգ չափական գրութիւն* 69 *եւն*։

**ԿԼԱՓ**, *դունչ, կզակ*. «*կլափդ մուշկ ու ամբար անուշահոտ է*.» 33, 62։

**ՀԱՍԻԱԹ**, թ. *խասիյէթ. յատկութիւն, սեպհականութիւն*. «*օձու հասիաթն է շատ*». 71, 6։

**ՀԱՍՐԱԹ**, թ. *հասրէթ, կարօտ, անձկութիւն*. «*րամք թռչունք երկնիցն քեզ հասրաթ է*.» 36, 132։

**ՀԱԻՍԱՐ**, *հաւասա՞ր*. «*Ծրարեմ զքեզ յիմ հոգիս հաւսար*, 33, 67։

**ՀԷՆՑ**, *այն ինչ*. 32, 54։

**ՀՈԳՍ**, *հոգք*. 68։

**ՀԻՐԻԿ**, *անուշահոտ բոյս մը*. 63, 7։

**ՂԱՐԻՊ, ՂԱՐԻՊՈՒԹԻՒՆ**, թ. *ղարիպ. պանդուխտ նժդեհ*. 58։

**ՂԱՓԱԶ**, թ. *ղաֆէս. վանդակ, գաւազիղք*. 68, 4։

**ՂՈՒՄՐԻ**, թ. *ղումրի, տատրակ*. 31, 28։

**ՂՈՒՍԱՑ**, թ. *ղուսսէ. տխրութիւն, տրտմութիւն. նեղութիւն, անձկութիւն*. 60, 40։

**ՂՐԱՐ**, թ. *ղարար* (قرار), *կայք, դադար, հանգիստ, հանդարտութիւն. ասկէ ղարարլընք, բնակիլ. հաստատուիլ*. «*որ գայ վարդըն սիրով առնէ ինձ ղրար*. 32, 34։

**ՃԱԽ**, *ճահիճ*. 66։

**ՃԱԽԱՌ**, *ճախառակ*. 76, 12։

**ՄԱՀԱՐԲՈՍ**? *մահարբեր*. «*մատուցեր տեղ մահարբոս*.» 67, 1։

**ՄԱՆՐԱԾԱՒԱԼ**, 29, 56։